« ԳԱԿ –ՇՀԱՊՁԲ-11/2-» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Գյումրու հ. 29 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում <Գ-29ՀԴ-ՇՀԱՊՁԲ-11/2-01>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք.Գյումրի Մանուշյան 7 հասցեով, մինչև 12 հունվարի 2015թ , ժամը 12:00 -ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղարը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն <<Գյումրու հ, 29 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքում, ք.Գյումրի Մանուշյան 7 հասցեով,

N ------ սենյակում 2015թ հունվարի 12-ին ժամը 12:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում <<Գյումրու հ. 29 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կարիքների համար՝սննդի ծանրոցների ձեռքբերումը:

<<Գյումրու հ. 29 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կարիքների համար՝սննդի ծանրոցների մատուցման (որոնք կազմված են՝ …. չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 10 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված 5 ), ըստ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել « ԳԱԿ –ՇՀԱՊՁԲ-11/2-» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<Գյումրու հ. 29 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ էլեկտրոնային փոստի հասցեն է՝ gyumri29@schools.am

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:
- *Ծանոթություն*՝ Գնման ընթացակարգը կազմակերպվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա:

**Հարգանքով ՝ Գյումրու հ.29 հիմնական դպրոց**

*Հավելված N 10*

**«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով**

*ընթացակարգի հրավերի*

Գ-29ՀԴ-ՇՀԱՊՁԲ-11/2-01 ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

# ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆՄԱՆ

**N ---------------------------**

ք. Գյումրի «-----» ---------------- 2-----թ.

«--------պատվիրատուի անվանումը----------», ի դեմս ------------------------------------------ յանի, որը գործում է ------------------------------ կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և ------------------------------------------ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն ---------------------------------------------------------- -ի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված -------------------- (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

**2. Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

**3.1 Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում` նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

**4. Ապրանքի գինը և վճարման կարգը**

4.1 Սույն պայմանագի ընդհանուր գինը կազմում է՝ ---------------------- (---------------------------------------------) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով

նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

### 5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

### 6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

### 7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Այլ պայմաններ**

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցում.

2) սույն պայմանագրով նախատեսված ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշվում են և դրանց փոփոխությունը գնահատվում է հետևյալ կերպ. --

--------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

-------------------------------------------------------------------------------- *կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:*

Սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում, չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է ---- էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2, 3 և 4 հավելվածները՝ բաղկացած ---- թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.9 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

**11.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| Գ Ն Ո Ր Դ | Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ |
|---|---|
| ------------------------- | ------------------ |
| --------------------------------------- | --------------------- |
| --------------------- | ------------------------ |
| -------------------------------- | -------------------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Օրինակելի ձև

Հավելված 5.1

"ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2" ծածկագրով

ընթացակարգի հրավերի

Գ-29ՀԴ-ՇՀԱՊՁԲ-11/2-01 ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված Գ-29ՀԴ-ՇՀԱՊՁԲ-11/2-01 ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,

_______________________________________________-ն առաջարկում է պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը

հետևյալ գնով՝

(ՀՀ դրամ)

| Գնման առարկայի անվանումը | Արժեք* | ԱԱՀ** | Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4=2+3* |
| **Սննդի ծանրոց** | | | |

* 2-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:

**Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 3-րդ սյունակում:

_______________________________________________ ____________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

____________________2014թ.

Օրինակելի ձև

Հավելված 5

“ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2” ծածկագրով

ընթացակարգի հրավերի

Գ-29ՀԴ-ՇՀԱՊՁԲ-11/2-01 ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

## ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

______________________________-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու

Ընթացակարգի մասնակցի անվանումը

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու հ. 29 հիմնական դպրոց» ՊՈԱԿ–ի կողմից Գ-29ՀԴ-ՇՀԱՊՁԲ-11/2-01 ծածկագրով հայտարարված ընթացակարգին և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

______________________________-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի Կողմից

Ընթացակարգի մասնակցի անվանումը

հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների.

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

______________________________________-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող

Ընթացակարգի մասնակցի անվանումը

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

________________________________-ն էլեկտրոնային փոստի հասցեն է՝ ____________

Ընթացակարգի մասնակցի անվանումը

_____________________________________________ ____________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

______________________2014թ.

(ամսաթիվը, ամիսը)

Հավելված N 1

N Գ29ՀԴ-ՇՀԱՊՁԲ-11/2-01 ծածկագրով պայմանագրի

# Տեխնիկական բնութագիր

## 1.Գնման առարկայի բնութագիրը

| Չափաբաժնի համարը | Գնման առարկայի անվանումը | Չափման միավորը | Տեխնիկական բնութագիրը |
|---|---|---|---|
| 1 | Սննդի ծանրոց | Հատ | օգտագործման հետ կապված պարագաներ պարունակող փաթեթ: Անվտանգությունը` ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9- |

## 2. Սննդի ծանրոցների բաղադրամասերը և նրանց տեխնիկական բնութագրերը

| | բաղադրամասեր | Չափման միավոր | Տեխնիկական բնութագրեր |
|---|---|---|---|
| 1 | Բուտերբրոդի հաց | գրամ | Պատրաստված բարձր տեսակի ալյուրից, թարմ ,փաթեթավորված կամ առանց փաթեթավորման: Տեղական արտադրության:Անվտանգությունը` ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի |
| 2 | Ցոգուրտ | գրամ | [illegible] կոնսերվանտների, փաթեթավորված մինչև 150գ տարողությամբ սպառողական տարաներով, յուղայնությունը 0.1-4.5 % ՀՍՏ 245-2005: Անվտանգությունը և մակնշումը` ըստ ՀՀ կառավարության |
| 3 | Վաֆլի | գրամ | Առանց միջուկի, չափածրարված տուփերով կամ կշռով: Անվտանգությունը` N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, պիտանելիության մնացորդային |
| 4 | Բուլկի | գրամ | Պատրաստված բարձր տեսակի ալյուրից, թարմ և փափուկ, թողարկված կշռով և հատով,փաթեթավորված կամ առանց փաթեթավորման, ՀՍՏ 44-2007: Անվտանգությունը` ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: |
| 5 | Հյութ | միլիլիտր | Անվտանգությունը և մակնշումը` ըստ ՀՀ կառավարության 2009 թ. հունիսի 26-ի թիվ 744-Ն որոշմամբ հաստատված "Հյութերին և հյութամթերքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի", |
| 6 | Սուֆլե | գրամ | Տեղական արտադրության կոնֆետ շոկոլադապատ մրգային, դոնդողային, դոնդողամրգային հավելանյութերով: ԳՕՍՏ-4570-93, Անվտանգությունը` ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը` "Սննդամթերքի |
| 7 | Կոնֆետ | գրամ | Անվտանգությունը` ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը` "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |
| 8 | Քաղցրաբլիթ | գրամ | [illegible] խոնավությունը 3-10% շաքարի զանգվածային մասը 20-27%, յուղայնությունը 3-30%, ԳՕՍՏ 14033-96: Անվտանգությունը ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ |

| | | | |
|---|---|---|---|
| 9 | Թռչնի կաթ | գրամ | Ըստ ԳՕՍՏ-ի, Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: |
| 10 | Պանրիկ | գրամ | Պատրաստված թարմ կովի կաթից, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ |
| 11 | Անձեռոցիկ | հատ | Անձեռոցիկ սեղանի,տեղական արտադրության,թղթի 1մ² մակերեսի զանգվածը 20գ,խոնավությունը 7%, փափուկ թղթից: Մակնշումը և փաթեթավորումը ըստ ՀՀ Կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված <<Կենցաղային և սանիհիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից |
| 12 | Գդալ | հատ | համար,մեկանգամյա օգտագործման համար: <<Կենցաղային և սանիհիգիենիկ նշանակության ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական |
| 13 | Պանիր, լոռի | գրամ | Պանիր պինդ, կովի կաթից, աղաջրային, սպիտակից մինչև բաց դեղին գույնի, տարբեր մեծության և ձևի աչքերով: 46 % յուղայնությամբ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների |
| 14 | Երշիկ | գրամ | Երշիկ եփած՝ պատրաստված տավարի եւ խոզի մսերից, ըստ ԳՕՍՏ 23670-79 կամ արտադրողի տեխնիկական պայմանների, խոնավությունը ոչ ավելի քան 68% փաթեթավորած վակուումային կամ առանց, յուրաքանչյուր փաթեթավորման միավորը համապատասխան պիտակավորմամբ: Անվտանգությունը՝ և մակնշումը ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված "Մսի եւ մսամթերքի |
| 15 | Թթվասեր, տեղական | միլիլիտր | Թարմ կովի կաթից, յուղայնությունը՝ 20 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 65-100 0T, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և |
| 16 | Թխվածքաբլիթ | գրամ | Կաթնահունց, շաքարահունց և երկարատև պատրաստված խոնավությունը 3-10% շաքարի զանգվածային մասը 20-27%, յուղայնությունը 3-30%, ԳՕՍՏ 14033-96: Անվտանգությունը ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ |
| 17 | Պեչենի | գրամ | Կաթնահունց, շաքարահունց և երկարատև պատրաստված խոնավությունը 3-10% շաքարի զանգվածային մասը 20-27%, յուղայնությունը 3-30%, ԳՕՍՏ 14033-96: Անվտանգությունը ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ |
| 18 | Շոկոլադապատ թխվածքաբլիթ | գրամ | Թխվածքաբլիթ կաթնահունց, շաքարահունց և երկարատև պատրաստված խոնավությունը 3-10% շաքարի զանգվածային մասը 20-27%, յուղայնությունը 3-30%,պատված շոկոլադի 1-2 մմ հաստություն ունեցող շերտով: Անվտանգությունը ըստ N 2-III-4.9-01-2010 |

**3.Սննդի ճանրոցները պետք է փաթեթավորվեն և մատակարարվեն վերևում սահմանված տեխնիկական բնութագրում ընդգրկված սննդամթերքի և սննդի օգտագործման հետ կապված պարագաների հետևյալ պարունակությամբ.**

| Ծանրոցի . . | Միավորի | Քանակ |
|---|---|---|
| Տարբերակ 1 | | |
| Բուտերբրոդ | 80-100գ | 1 |
| Հյութ | 200մլ | 1 |
| Բուլկի | 60-80գ | 1 |
| Թթվասեր | 100գ | 1 |
| Վաֆլի | 9-12գ | 5 |
| Սուֆլե | 9-12գ | 2 |
| Կոնֆետ | 4-6գ | 6 |
| Պեչենի | 6-8գ | 4 |
| Անձեռոցիկ | | 1 |
| Գդալ | | 1 |
| Տարբերակ 2 | | |
| Բուտերբրոդ | 80-100գ | 1 |
| Հյութ | 200մլ | 1 |
| Թթվասեր | 100գ | 1 |
| Պեչենի | 6-8գ | 4 |
| Քաղցրաբլիթ | 9-12գ | 3 |
| Թռչնի կաթ | 18-22գ | 4 |
| Պանրիկ | 40գ | 1 |
| Անձեռոցիկ | | 1 |
| Գդալ | | 1 |
| Տարբերակ 3 | | |
| Բուտերբրոդ | 80-100գ | 1 |
| Հյութ | 200մլ | 1 |
| Քաղցրաբլիթ | 9-12գ | 2 |
| Կոնֆետ | 4-6գ | 3 |
| Յոգուրտ | 100գ | 1 |
| Թռչնի կաթ | 18-22գ | 2 |
| Պանրիկ | 40գ | 1 |
| Անձեռոցիկ | | 1 |
| Գդալ | | 1 |
| Տարբերակ 4 | | |
| Բուտերբրոդ | 80-100գ | 1 |
| Հյութ | 200մլ | 1 |
| Թթվասեր | 100գ | 1 |
| Շոկոլադապատ թխվածքաբլիթ | 14-16գ | 4 |
| Սուֆլե | 9-12գ | 4 |
| Կոնֆետ | 4-6գ | 6 |
| Վաֆլի | 9-12գ | 5 |
| Բուլկի | 60-80գ | 1 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Անձեռոցիկ . | | | 1 | |
| Գդալ | | | 1 | |
| Տարբերակ 5 | | | | |
| Բուտերբրոդ | 80-100գ | | 1 | |
| Հյութ | 200մլ | | 1 | |
| Քաղցրաբլիթ | 9-12գ | | 4 | |
| Կոնֆետ | 4-6գ | | 5 | |
| Յոգուրտ | 100գ | | 1 | |
| Շոկոլադապատ թխվածքաբլիթ | 14-16գ | | 2 | |
| Թռչնի կաթ | 18-22գ | | 3 | |
| Անձեռոցիկ | | | 1 | |
| Գդալ | | | 1 | |
| Տարբերակ 6 | | | | |
| Բուտերբրոդ | 80-100գ | | 1 | |
| Հյութ | 200մլ | | 1 | |
| Թթվասեր | 100մլ | | 1 | |
| Պեչենի | 6-8գ | | 6 | |
| Վաֆլի | 9-12գ | | 5 | |
| Թռչնի կաթ | 18-22գ | | 5 | |
| Բուլկի | 60-80գ | | 1 | |
| Անձեռոցիկ | | | 1 | |
| Գդալ | | | 1 | |

**Հավելված 8**

**«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով**

*ընթացակարգի հրավերի*

Գ-29ՀԴ-ՇՀԱՊՁԲ-11/2-01 ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

## ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N

ք. Գյումրի «---------» -------------------- 20---թ.

--------------------------------------------------------------------------------------, ի դեմս Ընկերության տնօրեն՝

Մասնակցի անվանումը

-----------------------------------------------------------------------, որը գործում է Ընկերության կանոնադրության

Ընկերության տնօրենի անուն ազգանունը

հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

### *1. Համաձայնության առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է ------------------------------------------------

Պատվիրատուի անվանումը

(այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «Գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման» N ------------------ ծածկագրով ընթացակարգին, պետք է ներկայացնի պայմանագրի ապահովում և ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված «Գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման» N ------------------------- գնման պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ -------------------թվերով------------------- (-----------------------------տառերով----------------------------) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող «Մասնակցի բանկի անվանումը» կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով «Մասնակցի անվանումը», հանձնարարում է «Մասնակցի բանկի անվանումը»-ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում «Պատվիրատուի անվանումը» առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

## *2. Այլ պայմաններ*

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև 20----թ. ---------------------------–ի -----------–ը ներառյալ:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

*Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները*

----------------------------------------------------------------------------------------,

Մասնակցի անվանումը (անունը)

----------------------------------------------------------------------------------------,

(հասցեն)

----------------------------------------------------------------------------------------,

(բանկ)

*Հ/Հ* -------------------------------------------------------

*ՀՎՀՀ* --------------------------------------------------

----------------------------------------------------------------------------------------,

(Մասնակցի ղեկավարի պաշտոնը, անուն, ազգանուն)

-----------------------------------------------------------------------------------------------------------,

(ստորագրություն)

-----------------------------------------------------------------------------------------------------------,

(Մասնակցի գլխավոր հաշվապահի (հաշվապահի), անուն, ազգանուն)

-----------------------------------------------------------------------------------------------------------,

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 3

N ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 -1 ծածկագրով պայմանագրի

**Վճարման ժամանակացույց**

| Ապրանքի անվանումը | Ֆինանսավորման ժամկետը |
|---|---|
| | Ֆինանսավորումը կատարվելու է 2014 թվականի նախահաշվով նախատեսված գումարների սահմաններում , երկկողմ հանձնման – ընդունման արձանագրության հիմման վրա |
| | Ընդամենը տարի |
| Սննդի ծանրոցներ | 100% |

ԳՆՈՐԴ ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրությունը/ /ստորագրությունը/

Կ Տ Կ Տ

Հավելված 2

N <Գ-29ՀԴ-ՇՀԱՊՁԲ-11/2-01>
ծածկագրով

## Գնման ժամանակացույց

դրամ

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Չափի ման միավորը | Հունվար | | Փետրվար | | մարտ | | Ապրիլ | | Մայիս | | Սեպտեմբեր | | հոկտեմբեր | | Նոյեմբեր | | Դեկտեմբեր | | Ընդամենը տարի | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քան. | գումարը | քան. | գումարը | քան. | գումարը | քան. | գումարը | քան. | գումարը | քան. | գումարը | քան. | գումարը | քան. | գումարը | քան. | գումարը | քան. | գումարը |
| 1 | 2 | 3 | 4 | | | | | | 4 | | | | | | 4 | | | | | | 12 | 13 |
| 1 | Մննդի ծանրոցներ | հատ | 645 | | 860 | | 774 | | 903 | | 688 | | 903 | | 774 | | 903 | | 860 | | 7310 | |

*Ծանոթություն*՝ Գնման ընթացակարգը կազմակերպվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| /ստորագրությունը/ | /ստորագրությունը/ |
| Կ Տ | Կ Տ |